

**ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԲԺՇԿԱ-ՀԻԳԻԵՆԻԿ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ
ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ՔԱՐՈՉՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

17.07.2015թ.

Հուլիսի 16-17-ին Գորիսում երեխաների առողջության պահպանման և հիվանդությունների կանխարգելման նպատակով ՀՀ առողջապահության նախարարության կողմից անցկացվեցին դասընթացներ՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում բժշկա-հիգիենիկ գիտելիքների ուսուցման և առողջ ապրելակերպի քարոզչության վերաբերյալ:

Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատություններում երեխաների սննդի կազմակերպման կանոնների և սանիտարահիգիենիկ պահանջների կատարման խիստ հսկողությունը շարունակվում է: Դրան զուգահեռ, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի <<Առողջապահական պետական տեսչության>> կողմից հանրապետության բոլոր մարզերում իրականացվում են <<Բժշկական գիտելիքների ուսուցման և առողջ ապրելակերպի քարոզչություն>> թեմայով դասընթացներ՝ մանկապարտեզների տնօրենների, խոհարարների, դաստիարակների, բուժքույրերի մասնակցությամբ:

Գորիսում անցկացված քննարկմանը մասնագետները մանրամասն ներկայացրեցին մանկապարտեզների, մանկապարտեզի սննդակարգի, երեխաների առողջական վիճակի, հիգիենայի մասին տեղեկատվություն: Նախակրթարանների տնօրեններին ներկայացվել են անհրաժեշտ բոլոր չափորոշիչները և հանձնարարվել շատ կարճ ժամանակահատվածում վերացնել թերությունները:

